# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**25 օգոստոսի 2025 թվական հ. Արթիկ, գ. Տուֆաշեն**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<ՌՊՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի <<Տուֆաձորի>> տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային 1-ին քննարկման

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 14:30-ին:

**Ներկա էին՝** Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը, Արթիկի համայնքապետարանի ոլորտային ներկայացուցիչներ, Տուֆաշեն բնակավայրի վարչական ղեկավարներ, <<ՌՏՊ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Պետրոսյանը, ինժեներ-երկրաբան Մանվել Հարությունյանը, Տուֆաշեն բնակավայրի բնակիչներ:

**Հանրային քննարկումը վարում էր՝**
Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ (խմբագրված ՀՀ կառավարության 28.12.2023, N 2343-Ն որոշմամբ) սահմանված կարգով 2025թ. օգոստոսի 25-ին, ժամը՝ 14:30-ին, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական շենքում տեղի են ունենում <<ՌՊՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆաձորի տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու» վերաբերյալ հանրային լսում /առաջին հանրային լսում/:
Օրակարգում՝ <<ՌՊՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆաձորի տեղամասում 08-111-0104-0097 կադաստրային ծածկագրով 6.76287 հա մակերեսով տարածքների երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու» վերաբերյալ հանրային լսում /առաջին հանրային լսում/:
Նա խոսքի իրավունքը փոխանցեց ինժեներ-երկրաբան Մ. Հարությունյանին, ով հանգամանալից զեկուցեց ընկերության նպատակները, նախնական գնահատման հայտի էությունը: Նա ներկայացրեց, որ օրենքով սահմանված կարգով համայնքը կազմակերպել է հանրային քննարկումներ:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի <<Տուֆաձորի>> տեղամասում հետախուզական աշխատանքները նախատեսնվում են իրականացնել՝ հաշվի առնելով ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Այս տարածքում երբևէ նմանատիպ աշխատանքներ չեն իրականացվել, <<ՌՏՊ>> ընկերությունն այդ աշխատանքները նախատեսում է իրականացնել առաջին անգամ: Նախնական գնահատման հայտի կազմման համար ընկերությունը կատարել է տեղանքի տոպոգրաֆիական հանույթ 1:1000 մասշտաբի, որպեսզի ճիշտ որոշեն տարածքի կոորդինատները: Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման աշխատանքային ծրագիրը կազմվել է «ՌՏՊ» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցների հաշվին, տուֆերի ուսումնասիրման և գնահատման նպատակով, որպես ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով, կկատարվի հումքի նմուշառման աշխատանքներ, կուղարկվի լիցենզավորված լաբորատորիա, որտեղից էլ ընկերությունը կստանա նմուշի ֆիզիկոմեխանիկական հատկությունները, ինչպես նաև քիմիական և մինիերոլոգիական ուսումնասիրություններ: Դրական արդյունքներ ունենալուց հետո ընկերությունը կկատարի հաշվետվություն՝ իր տեխնիկոտեսական հիմնավորումով և կներկայացվի ՏԵԿ նախարարության համապատասխան ստորաբաժանում, այստեղ փորձաքննությունից հետո կկատարվի պաշարների հաստատում:

Բացի հորատման և նմուշառման աշխատանքներից, ըստ օրենքի, 150 մ խորանարդ փորձնական բացհանքի հանույթ է նախատեսվում թարմ ապարներից, այս գործողության նպատակն է հասկանալ, թե այդ ծավալի հումքից տուֆ քանի հատքար որքան կստանա ընկերությունը: Այս փուլից հետո որոշվում է տվյալ լեռնային զանգվածից տուֆի հանքարի արդյունահանման ելքը: Բացի այս աշխատանքներից, նախատեսվում է նաև հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ. հիմնական նպատակն այն է՝ արդյոք տարածքում կան ստորգետնյա գրունտային ջրեր, որը կարևոր է նաև սողանքային փլուզումների կանխարգելման համար: Ըստ տրամաբանության, այս տեղամասում տուֆի հաստությունն այնքան էլ մեծ չէ և գրունտային ջրերին չի հասնելու, այնուամենայնիվ, այդ դիտարկումները արվելու են:
Կատարվելու են նաև ռադիոմեդրիական չափագրումներ ռադիոմեդրիական չափիչ գործիքի օգնությամբ, որոշելու համար, թե տվյալ ապարն ինչ ճառագայթահիգիենիկ հատկություն ունի: Եթե հրաբխային տուֆերի մեջ լինի ռադիոճառագայթների բարձր պարունակություն, ապա ընկերության կողմից կփաստվի, որ տվյալ հումքաքարը պիտանի չէ շենքերի և շինությունների կառուցման համար:
Վերջնական հաշվետվության կազմման աշխատանքներից հետո այս ամենը հիմնավորվում է տեխնիկատնտեսական հիմնավորումներով: Հաշվի են առնվում նաև սահմանված կարքով պետության բյուջե մուծվելիք գումարները, այս ամենից հետո էլ հաշվվում է ընկերության շահույթները:
Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում շրջակա միջավայրի վրա ազդեցության կանխարգելիչ բնապահպանական միջոցառումներին: Երկրաբան–ինժեները ներկայացրեց, որ ամենամեծ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա տուֆ քարի արդյունահանման ընթացքում՝ փոշու արտանետումներն են, որը կարելի է կանխարգելել ջրցան մեքենայի օգնությամբ՝ օրական մի քանի անգամ այդ միջոցառումը կազմակերպելով: Ընկերությունը կկազմակերպի օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները և բարեխիղճ մոտեցում

կդրսևորի ընդերքի և շրջակա միջավայրի նկատմամբ, որպեսզի ունենա ճիշտ և արդյունավետ շահագործում: Նա ասաց, որ ակնկալվում է տուֆի հումքից 40% տուֆի արդյունահանում, իսկ մնացյալ 60% լետնային զանգված է, որը հաշվարկվելու է որպես ավազի և շիբինի հումք, որով կլուծվի թափոնների օգտագործման խնդիրը:

Նա անդրադարձավ նաև ռեկուլտիվացիոն աշխատանքներին՝ ներկայացնելով օրենսդրական կարգավորումները, կառավարության և համայնքի աչալուրջ մոտեցումները ռեկուլտիվացիոն աշխատանքներին: Նա ասաց, որ համայնքի դերն այս հարցում մեծ է, ընդհուպ մինչև լիցենզիայի կասեցման կարող է հասնել համայնքը՝ լիազոր մարմնին հիմնավորած ներկայացնելով անբարեխիղճ շահագործողների կոպիտ բացթողումներն ու թերությունները: Իսկ ռեկուլտիվացիոն գումարները կհաշվարկվեն մինչև ՇՄԱԳ հաշվետվության ներկայացնելը:
Մ. Հարությունյանը նաև խոսեց համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ընկերության պարտավորությունների մասին: Տնտեսվարող-համայնք հարաբերությունը պետք է համահունչ լինեն:

**Հնչեցին հարցեր**

1. Համայնքի բնակիչ Ավետիք Մովսիսյանն ասաց, ինչ է լինելու իրենց անասունների հետ, քանի որ մոտ 6 հա արոտավայր կկրճատվի հանքի շահագործման դեպքում:
   Ընկերության տնօրեն Տ. Պետրոսյանը նշեց, որ ինքը պատրաստակամ է ռեկուլտիվացնել 16-17 հա լքված հանքեր: Սակայն նա նշեց, որ տուֆ քարի պաշարները գուցե և չհաստատվեն այս տարածքում, գուցե իրենց ձեռնտու չլինի հանքի շահագործում իրականացնել այս տարածքներում: Միայն հանքապաշարների հաստատումից հետո հնարավոր կլինի խոսել մոտ 17 հա լքված հանքատարածքների ռեկուլտիվացիայի համար:
2. Համայնքի բնակիչ Արման Գրիգորյանը հարցրեց, ճանապարհը, որն անցնում է հայցվող տարածքի միջով, արդյոք չի փակվելու և խոչընդոտելու կենդանիների տեղափոխությունը դեպի ավելի հեռու արոտավայրեր:
   Ընկերության ներկայացուցիչ Տ. Պետրոսյանը հավաստեց, որ ճանապարհի խնդիր չի լինի, ինքը երաշխավորում է:

3. Համայնքի բնակիչ Մ. Մխիթարյանը հարցրեց, ինչպես է պայքարելու տնտեսվարողը փոշու ամպերի դեմ:
   Ինժեներ-երկրաբանն Մ. Հարությունյանն ասաց, որ հետախուզումը կատարվելու է հորատանցքերի հորատման միջոցով՝ ամենաշատը 127 մմ դիամետրով, այս ընթացքում բացասական հետևանքներ շրջակա միջավայրի վրա չեն կարող լինել, չեն օգտագործվելու ռեագենտներ, 150 մ խորանարդ փորձնական բացիանքի ժամանակ աշխատելու է քարհատ մեքենա, որից աննշան, չնչին քանակությամբ փոշու արտանետումներ են լինելու:
   Համայնքի բնակիչ Մ. Մխիթարյանը հակադարձեց, որ տարածքում շահագործվող ոչ մի հանքում ջրցանումներ չեն իրականացվում: Բացի այդ համայնքում, որտեղ սեզոնին խմելու ջրի լուրջ խնդիրներ կան, ընկերությունը որտեղից է վերցնելու ջրցանման համար ջուր:

4. Համայնքի բանակիչ Տ. Չարչյանը հարցրեց, բուսածածկ է արդյոք տարածքը, առկա են սևահողեր, թե լերկ տարածք է:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ հանքատարածքը զուրկ է հողաբուսածածկից, այն ամբողջությամբ քար է:

5. Նիստը վարող Վ. Մակեյանն ասաց, որ վերոնշյալ տարածքի նպատակային նշանակությունն այս պահին արոտավայր է, պաշարների հաստատումից և լիցենզիա ստանալուց հետո հողի նպատակային նշանակությունը կփոխվի:

6. Նա հարցրեց, թե ինչքան ժամանակ կտևի մինչ լիցենզիա ստանալը:
<<ՌՏՊ>> ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ մոտ 3 տարի է պետք այս գործընթացներն ավարտելու համար: Երկրաբանահետախուզական աշխատանքները կտևեն մոտ 2 տարի, իսկ լիցենզիայի գործընթացը՝ մոտ մեկ տարի:
Տուֆաշեն բնակավայրի բնակիչները նշեցին, որ դեմ են նախատեսվող գործունեությանը, առավել ևս՝ նոր հանքի բացմանը:

Հանրային քննարկումը վարող Վ. Մակեյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց քննարկումները:

Հանրային քննարկումն ավարտվեց 15:45-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ _____ Վ. Մակեյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական՝ _____ Տ. Չարչյան

<<ՌՏՊ >> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Տ. Պետրոսյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

<<ՌՊՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Տուֆածորի տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ հանրային լսումների /առաջին հանրային լսում/մասնակիցների

**ՑՈՒՑԱԿ**

**25.08.2025 թ. ժամը 14:30-ին** **Արթիկի համայնքապետարան**

| Հ/Հ | Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը | Հեռախոսահամարը | Զբաղվածությունը | Ստորագրությունը |
|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | 093-62-21-66 | [illegible] | [illegible] |
| 2 | [illegible] | 077-85-20-21 | [illegible] | [illegible] |
| 3 | [illegible] | 093 844 222 | [illegible] | [illegible] |
| 4 | [illegible] | 098885998 0 | [illegible] | [illegible] |
| 5 | [illegible] | | [illegible] | [illegible] |
| 6 | [illegible] | | [illegible] | [illegible] |
| 7 | [illegible] | 093-21-54-41 | [illegible] | [illegible] |
| 8 | [illegible] | 093-63-70-20 | [illegible] | [illegible] |
| 9 | [illegible] | 093 353638 | [illegible] | [illegible] |
| 10 | [illegible] | 098-870-970 | [illegible] | [illegible] |
| 11 | | | | |